

«Վասն հայության», 16 դեկտեմբեր 2002

«Արարատ» (Բեյրութ), 10 հունվար 2003

## Երբ բթանում է վտանգի զգացումը

*Արմեն Այվազյան*

Ինչպես հայտնի է, 2003 թ. հունիսի 16-24-ին, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվելու են բազմազգ գորավարժություններ Cooperative Best Effort-2003: Նախատեսված է նաև թուրքական բանակի ստորաբաժանումների մասնակցությունը:

Այս զինավարժություններին թուրքական զորաջոկատի ծրագրված մասնակցությունը պետք է դիտարկել մի քանի հարթություններում. *ռազմական բնագավառում պետությունների միջև համագործակցության մասին միջազգային ընդունված նորմերի և պատկերացումների տեսանկյունից, ազգային ոգու և խորհրդանիշների տեսանկյունից, ինչպես նաև Հայաստանի ներքաղաքական գործընթացների տեսանկյունից:*

Թուրքական ռազմական ներկայությունը Հայաստանում և համագործակցությունը հայկական զինուժի հետ միջազգային պրակտիկայի մեջ աննախադեպ նոստես է լինելու: Հանրահայտ և օրինաչափ փաստ է, որ համատեղ զինավարժությունները հնարավոր են միայն այն պետությունների միջև, որոնք ունեն դաշնակցային, բարիդրացիական կամ առնվազն սուր հակասություններից զերծ, ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը ձևավորվող հարաբերություններ: Արդ, հայ-թուրքական հարաբերությունները ո՛չ դաշնակցային են, ո՛չ բարիդրացիական են, ո՛չ էլ զարգանում են ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը: Գիշտ հակառակը՝ այդ հարաբերություններն առանց չափազանցության կարելի է բնորոշել իբրև թշնամական, այսպես. արդեն 11 տարի է Թուրքիան հրաժարվում է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, 9 տարի է շրջափակում է Հայաստանը (սա ինքնին պատերազմական գործողություն է), Ղարաբաղյան հակամարտության մեջ անվերապահորեն աջակցում է Ադրբեյջանին

դիվանագիտական, քարոզչական, ռազմատեխնիկական, հետախուզական և բոլոր այլ հնարավոր միջոցներով, յուրաքանչյուր տարի զգալի գումար է տրամադրում հակահայկական ու հակահայաստանյան ներքին և արտաքին քարոզչության, ներառյալ՝ ցեղասպանության փաստը ժխտելու և հայոց պատմությունը կեղծելու համար: Ավելին՝ թուրք պետական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաները մերթ ընդ մերթ սպառնում են Հայաստանի դեմ ռազմական ուժ գործադրել (այդօրինակ սպառնալիքներով է ուղեկցվում թուրքական և ադրբեջանական զինվորական հրամանատարության յուրաքանչյուր փոխադարձ այցը Բաքու կամ Անկարա):

Արդյո՞ք հնարավոր է պատկերացնել համատեղ զորավարություններ ԱՄՆ-ի և Կուբայի միջև (ընդ որում՝ Կուբայի տարածքում), Իսրայելի և Սիրիայի միջև (ընդ որում՝ Սիրիայի տարածքում), Կիպրոսի և Թուրքիայի միջև (ընդ որում՝ Կիպրոսի տարածքում), նաև Պակիստանի և Հնդկաստանի, Իրանի և Իրաքի, Եթովպիայի և Էրիտրեայի միջև: Այսպիսի զորավարություններն սկզբունքորեն անհնար են, որովհետև կողմերն ունեն բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնցից առաջ ընկնելն ու «ռազմական գործընկերություն» խաղալը զավեշտ է: Այսօրվա հարաբերությունների պայմաններում հայ-թուրքական զինավարությունները (թեկուզ և բազմազգ ուժերի կազմում) նույնպես անհեթեթություն են, սակայն դրանք վտանգ են պարունակում և վնասաբեր են միմիայն հայկական պետականության համար: Պատճառները հետևյալն են:

Թուրքական ստորաբաժանման (կարևոր չէ՝ 30 թե 300 զինվորների) մուտքը Հայաստանի տարածք իբրև մի գործընկեր ու բարեկամ, որն ուս ուսի հայ զինվորների հետ կռվելու է պայմանական «թշնամու» դեմ, ուժգին հարված է հասցնելու հայ ժողովրդի աշխարհընկալման և աշխարհաքաղաքական դիրքորոշումների ամբողջ համակարգին: Հայաստանում կտրուկ աճ կապի մարդկանց արդեն իսկ առկա այն խավը, որն իր մանր շահույթը համազգային շահից վեր է դասում: Իսկ այն հայերը, որոնք փայփայում են հայկական պետականությունը վերածնված ու կայացած տեսնել՝ իրավացիորեն գնահատելու են թուրք ասկյարի ոտքը Հայաստանում որպես հերթական նահանջ ազգային և պետական արժանապատվությունից, խոնարհում

թուրքական ուժի առջև: Ինքնըստինքյան պարզ է, թե ազգային ոգին և խորհրդանշային համակարգը ինչպիսի կարևորագույն նշանակություն ունեն պետության և բանակի շինարարության գործում: Իզուր չէ, որ թուրքերը արգելքներ են դնում նույնիսկ հայ լեռնագնացների՝ Արարատ լեռան գագաթը բարձրանալու առջև:

Չմոռանանք, որ սա այն նույն թուրքական բանակն է, որն իրականացրել է հայերի ցեղասպանությունը, ցայսօր այն չի ընդունել և փոխհատուցում չի առաջարկել հայերին, ինչը նշանակում է, թե այդ բանակը պատրաստ է կրկնել եղեռնագործությունը: Սա այն նույն թուրքական բանակն է, որը մինչև այսօր բռնազավթում է Արևմտյան Հայաստանը (կարևոր չէ, որ այդ բռնազավթումն այժմ միջազգային ատյաններում համապատասխանորեն ձևակերպված չէ): Սա այն նույն թուրքական բանակն է, որը հրետանային վարժությունների ժամանակ ուղիղ նշանառությամբ ոչնչացնում է հայկական հուշարձանները (այդպես է գետնին հավասարեցվել Մշո Սուրբ Կարապետի վանքը): Թուրք-հայկական ռազմական համագործակցությունը կարող է միայն թուլացնել և խարխլել հայ հասարակության ու բանակի՝ այս բարդ տարածաշրջանում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, բթացնել հայոց զգոնությունը, թուրքիայից սպառնող վտանգի զգացումը: Պարտավոր ենք վերհիշել պատմության դասերը, օրինակ, թե ինչի՝ բերեցին 1915 թ. առաջ երիտթուրքերի հետ հայ քաղաքական ղեկավարների սիրախաղերը, որոնք ժամանակին ներկայացվում էին իբրև դիվանագիտության գլուխգործոց (այդ սին քաղաքականությունն, ի դեպ, խստորեն դատապարտում էր Անդրանիկը): Այդ սիրախաղերի արդյունքում էր, որ Մեծ եղեռնի ժամանակ արևմտահայերն անակնկալի եկան և անպատրաստ գտնվեցին հանընդհանուր կազմակերպված դիմադրության համար:

Տխուր խոհերի տեղիք է տալիս նաև հայկական ու թուրքական կողմերի կանխատեսումների տարբերությունը՝ թուրքական զորամասի քանակի և կազմի վերաբերյալ: Մինչ հայկական կողմը հայտարարում է, որ թուրքական մասնակցության չափը կորոշվի զորավարժությունների ծրագրման գալիք համաժողովում, թուրքական կողմը հպարտորեն հայտարարում է, որ ինքն է որոշելու իր մասնակցության չափն ու մակարդակը:

Թուրք-հայկական «զինընկերությունը» շատ ավելի հեռու է գնում, քան տխրահռչակ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը» (ԹՀՀՀ): Չէ՞ որ ռազմական գործընկերությունը նշանակում է, որ հաշտեցումն արդեն կայացած է և այդ ուղղությամբ «աշխատող» որևէ հանձնաժողովի կարիք այլևս չկա: Հետևաբար, հայ քաղաքական այն կուսակցություններն ու ուժերը, որոնք խստորեն քննադատեցին ԹՀՀՀ-ի ստեղծումն ու գործունեությունը, պարտավոր են էլ ավելի կտրուկ հանդես գալ նաև այս զինավարժություններում թուրքերի մասնակցության դեմ:

Այն, որ այս զինավարժություններն անցկացվում են ՆԱՏՕ-ի շրջանակներում նշանակում է, որ Թուրքիան շարունակում է մխրճվել Այսրկովկաս արդեն ՆԱՏՕ-ական ծրագրերի և ենթակառուցվածքի օժանդակությամբ, միաժամանակ որևէ կերպ չմեղմելով իր հակահայկական քաղաքականությունը: Հայաստանի համար գուցե և օգտակար լինի ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը, սակայն՝ առանց Թուրքիայի: Այս առթիվ հիշեցնենք, որ 1974 թ. Կիպրոս թուրքերի ներխուժումից հետո ՆԱՏՕ-ի անդամ Հունաստանը բազմիցս է հրաժարվել մասնակցել այն զորավարժություններին, որոնց պետք է մասնակցեր նաև Թուրքիան:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հայության հասարակական գիտակցության և Հայաստանի անվտանգության արմատական հարցերը (այդ թվում՝ հայ-թուրքական հարաբերությունները) շոշափող որոշումներ ընդունելիս, պարտավոր է հաշվի նստել քաղաքական բոլոր ուժերի, մտավորականության, ի վերջո՝ ամբողջ հայ ժողովրդի կարծիքի հետ: Առանց այդ կարգի խորհրդակցությունների և կոլեգիալ որոշումների իշխանություններն էլ ավելի են սրելու իրենց նկատմամբ ժողովրդի ունեցած անվստահությունը, ու արդեն ոչ միայն սոցիալական, այլև համազգային խնդիրների հարցերում: Պարզ չէ, թե ՀՀ ղեկավարությունը ու՞մից և ի՞նչ այսրոպեական օգուտներ է ակնկալում ստանալ՝ արտոնագրելով թուրք զինվորականների մուտքը Հայաստան: Մի բան պարզ է, սակայն. այդ օգուտները երբեք չեն կարող ավելին լինել, քան վերը նշված ազգային ոգու և արժանապատվության կորուստները:

Ուստի ՀՀ իշխանությունները պետք է սկզբունքորեն բացառեն թուրքերի մասնակցությունը Հայաստանի տարածքում նախատեսված որևէ զորավարություններին: